

ARM SWISS BANK
Private & Investment Banking

ՏԱՐԵԿԱՆ **2006**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ

ARM SWISS BANK

Private & Investment Banking



ՏԱՐԵԿԱԼ 2

ՆԱԾԿԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մեր **տեսլականն** է լինել Հայաստանի առաջատար ունիվերսալ բանկ, որը համատեղում է կորպորատիվ, ներդրումային և փրայվիթ բանկային ծառայությունների առավելությունները՝ նպաստելով իր հաճախորդների, գործընկերների և բաժնետերերի համար լավագույն արդյունքների ձևավորմանը:

Մեր **առաքելությունն** է նպաստել մեր կորպորատիվ և անհատ հաճախորդների բարգավաճմանը՝ մատուցելով միջազգային բանկային պրակտիկայում ընդունված և նրանց պահանջներին համապատասխանող բարձրակարգ ֆինանսական լուծումներ:

Մեր բիզնես-փիլիսոփայության հիմնարար **արժեքներն** են.

Հաճախորդի կարևորում

Պրոֆեսիոնալիզմ

Շրջահայացություն

Գործընկերություն

Կոնֆիդենցիալություն

Շիտակություն

Private
Banking

2006թ.-ի Բանկի հիմնական իրադարձությունները

Հունվար	Միջազգային շուկաներում էլեկտրոնային առևտրի համակարգի ներդրում և միջազգային ինդեքսների ու բաժնետոմսերի տարբերության պայմանագրերով մարժինալ գործառնությունների իրականացում Վարկերի վերաֆինանսավորման (պարտքի զիջում) գործիքի ներմուծում
Փետրվար	Բանկի վեբ կայքի հայերեն տարբերակի գործարկում
Մարտ	«Հայաստանի հիփոթեքային շուկայի մասնակիցների միության -ը հիմնադիր-անդամակցություն Օտարերկրյա ներդրումային հիմնադրամների բաժնետոմսերում (փայերում) ներդրումների իրականացում
Ապրիլ	Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման հանձնաժողովի ստեղծում
Մայիս	Բանկին ՀՀ պետական (գանձապետական) միջին ժամկետայնության և կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային շուկայի գործակալի կարգավիճակի շնորհում ՀՀ կենտրոնական բանկի ու Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից «Հայաստանում Ամերիկայի Առևտրի Պալատ -ին անդամակցություն
Հունիս	Բանկի գործունեության համապատասխանության հսկման հանձնաժողովի ստեղծում
Հուլիս	Ֆինանսական դիտարկումների հանձնաժողովի ստեղծում
Օգոստոս	Հաճախորդների համար արտարժույթի առք ու վաճառքի ֆորվարդային և սվոպ գործառնությունների իրականացում
Սեպտեմբեր	Ռեյթերս միջազգային տեղեկատվական համակարգում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ-ի երկրորդ պաշտոնական էջի բացում (առաջինը՝ ARSJ, երկրորդը՝ ARSI) Միջազգային առևտրի ֆինանսավորման գործիքի ներմուծում
Հոկտեմբեր	Ինտերնետային երկրորդ հասցեի՝ www.armswissbank.com -ի գործարկում
Նոյեմբեր	ՀՀ ձեռնարկություններին կորպորատիվ արժեթղթերի թողարկման խորհրդատվության մատուցում
Դեկտեմբեր	Ներքին ֆակտորինգի ծառայության ներդրում Ներդրումներ ՀՀ կորպորատիվ պարտատոմսերում

*Investment
Banking*

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Խորհրդի նախագահի ուղերձը	5
Գործադիր տնօրենի ուղերձը	6
Գործունեության հիմնական ուղղությունները	9
Մատուցվող ծառայություններ	10
Կորպորատիվ կառավարում	15
Անձնակազմի կառավարում	17
Ռիսկերի կառավարում	19
Հաճախորդներ և գործընկերներ - Գործունեության հիմնաքար	21
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	23
Ֆինանսական արդյունքներ	25

Բանկի Խորհրդի նախագահի ուղերձը

Հարգելի՛ տիկնայք և պարոնայք

Ավարտվեց Բանկի գործունեության երկրորդ տարին, և ես գոհունակությամբ կարող եմ փաստել, որ մեզ հաջողվել է հասնել տարվա սկզբին դրված հիմնական ռազմավարական նպատակներին: Իհարկե, այդ նպատակներին հասնելու ճանապարհին կային նաև խոչընդոտներ, սակայն դրանց աստիճանական հաղթահարումը մեզ դարձրեց էլ ավելի ուժեղ, հաստատակամ և նպատակասլաց: Ինչ խոսք, դժվար է կայանալ և աճել ՀՀ բանկային համակարգում ներկայումս տիրող խիստ մրցակցության պայմաններում: Ուստի հատկապես նշանակալի է այն փաստը, որ մենք չենք շեղվել մեր տեսլականից և բիզնես-փիլիսոփայությունից: Մենք շարունակում ենք հետևողականորեն ներդնել փրայվիթ-բենքինգի հիմնարար սկզբունքները՝ կորպորատիվ և ներդրումային բանկային ծառայությունների զարգացման և կատարելագործման միջոցով:

2006 թվականին Բանկի առջև դրված չէր եղել ցանկացած գնով առավելագույն շահույթի հասնելու նպատակ: Նույնը կարող եմ ասել նաև 2007 թվականի մասին: Մեզ համար ներկա փուլում առավել կարևոր են երկարաժամկետ նպատակները, այն է՝ կայուն, վստահելի և շվեյցարական ժամացույցի մեխանիզմի պես աշխատող ֆինանսական կառույց ստեղծելը:



2006 թվականի ընթացքում Բանկի կորպորատիվ կառավարման համակարգում տեղի են ունեցել էական բարեփոխումներ, որոնք պայմանավորված էին ոչ միայն օրենսդրական պահանջների փոփոխությամբ, այլ նաև Բանկի ձգտմամբ՝ կիրառել և ներդնել լավագույն միջազգային փորձը: Խորհուրդը համալրվել է կառավարման ոլորտի փորձառու մասնագետներով, որոնք էլ ավելի ամրապնդելու և բարելավելու են Բանկի կորպորատիվ կառավարումը և ներքին հսկողությունը: Բանկի գործունեության և զարգացման փուլերին համահունչ փոփոխվել է Բանկի կազմակերպական կառուցվածքը՝ նպաստելով կառավարման մակարդակի և ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացմանը:

2007 թվականին Բանկը պատրաստվում է ստեղծել կոլեգիալ գործադիր մարմին (տնօրինություն)՝ Բանկի ռիսկերի կառավարման և կորպորատիվ կառավարման մակարդակը բարձրացնելու նպատակով, ինչպես նաև ավելացնել իր կանոնադրական կապիտալը 1 մլրդ դրամով, ինչն էլ ավելի կմեծացնի Բանկի ֆինանսական հնարավորությունները և այն կդարձնի ավելի հուսալի:

Անցած տարիների փորձը և անձնակազմի պրոֆեսիոնալ բարձր մակարդակը թույլ են տալիս համոզմունք հայտնել, որ Բանկն առաջիկայում ամրապնդելու է իր դիրքերը ՀՀ բանկային համակարգում, իսկ իր ռազմավարական ոլորտներում, ինչպիսիք են ներդրումային բանկային ծառայությունները և ֆինանսական գործառնությունները, գրավելու է առաջատար դիրքեր՝ ներդնելով միջազգային ստանդարտներին համապատասխանող ինովացիոն բանկային ծառայություններ և տեխնոլոգիաներ:

Շնորհակալություն են հայտնում Բանկի ղեկավարությանը և անձնակազմին՝ նվիրվածության և կատարված աշխատանքի համար:

Լավագույն մաթթանքներով, փոխշահավետ համագործակցության պատրաստակամությամբ և հարգանքներով՝

Խորհրդի Նախագահ



Վարդան Սիրմաքես

Բանկի Գործադիր տնօրենի ուղերձը



Հարգելի՛ Հաճախորդներ և Գործընկերներ

Պատիվ ունենք Ձեզ ներկայացնելու Բանկի երկրորդ տարեկան հաշվետվությունը: 2006թ.-ը բավականին արգասաբեր էր Բանկի համար: Նախորդ տարվա ընթացքում, ինչպես և 2005թ.-ին, Բանկն իր հիմնական ջանքերը կենտրոնացրել էր ենթակառուցվածքային խնդիրների լուծման, գործող բանկային տեխնոլոգիաների հստակեցման և կատարելագործման, նոր ծառայությունների մշակման և ներդրման, գործընկերների հետ հարաբերությունների ձևավորման և ամրապնդման վրա:

Բավականին լուրջ աշխատանք է կատարվել հաճախորդների կարիքները լավագույնս բավարարելու ուղղությամբ: Բանկը հանդես է եկել ինովացիոն (նորարարական) նախաձեռնություններով՝ ներդնելով միջազգային պրակտիկայում լայնորեն տարածված, սակայն ՀՀ շուկայում դեռևս կիրառում չգտած մի շարք ֆինանսական գործիքներ և ծառայություններ: Այսպես, ուսումնասիրելով շուկայի պահանջները՝ 2006 թվականին Բանկն իր հաճախորդներին հնարավորություն է ընձեռել սահմանափակել իրենց արտարժույթային ռիսկերը Բանկի կողմից առաջարկվող արտարժույթային ռիսկերի կառավարման գործիքակազմի միջոցով, որը ներառում է արտարժույթային ֆորվարդ և սվոփ գործիքներ: Բանկը սկսել է մատուցել նաև ներքին առևտրի ֆինանսավորման ֆակտորինգային ծառայություններ: Նոր գործիքների ներդրմանը զուգընթաց մեծ ուշադրություն է դարձվել ռիսկերի կառավարման մակարդակի բարձրացմանը՝ մշակվել են ռիսկերի գնահատման և կառավարման ուղեցույցներ, սահմանվել արտարժույթային գործառնությունների սահմանաչափեր:

Տարվա ընթացքում վերանայվել են որոշ բանկային ծառայությունների տեխնոլոգիաներ, ինչի շնորհիվ պարզեցվել և հաճախորդների համար առավել դյուրին են դարձել այդ ծառայությունների մատուցման մեխանիզմները: Չեռնարկված միջոցառումների արդյունքում աճել է Բանկի հաճախորդների թիվը: Ապագայում ևս Բանկը պատրաստվում է շարունակել իր ինովացիոն գործունեությունը՝ հաճախորդներին առաջարկելով նոր գործիքներ և կատարելագործելով գործող ծառայությունների մատուցման մեխանիզմները:

2006թ.-ին Բանկն ակտիվ է եղել ՀՀ ֆինանսական շուկայում՝ իրականացնելով մեծ ծավալի ֆինանսական գործառնություններ, ինչի շնորհիվ ստացել է ՀՀ պետական (զանձապետական) միջին ժամկետայնության և կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային շուկայի գործակալի կարգավիճակ:

Բանկն ակտիվորեն մասնակցել է նաև արժեթղթերի շուկայի զարգացմանն ուղղված նախաձեռնություններին, ընդլայնել և բարելավել է ներդրումային ծառայությունների գործիքակազմը: Նշեն նաև, որ պոտենցիալ հաճախորդների հետ ձեռք են բերվել ներդրումային ծառայությունների մատուցման պայմանավորվածություններ, իսկ հայաստանյան երկու հայտնի ընկերությունների հետ կնքվել են նրանց կողմից կորպորատիվ պարտատոմսերի թողարկման կազմակերպման խորհրդատվության տրամադրման պայմանագրեր:

Բանկն ամրապնդել է նաև ՀՀ ֆինանսական շուկայում գործընկեր հանդես գալու իր կարգավիճակը՝ համագործակցելով ՀՀ ֆինանսաբանկային համակարգի գրեթե բոլոր մասնակիցների հետ, այդ թվում՝ շուկայում նոր ծառայությունների ներդրմանն ուղղությամբ: Ընդլայնվել են նաև միջազգային կառույցների հետ համագործակցության շրջանակները: Բանկի անձնակազմը համալրվել է բանիմաց կադրերով, աշխատանքներ են տարվել աշխատակիցների պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացման ուղղությամբ:

2007 թվականին Բանկը պատրաստվում է ստանալ արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեության լիցենզիաներ, ընդլայնել ֆինանսական միջնորդի իր դերը ՀՀ ֆինանսական շուկայում և, իհարկե, ակտիվացնել իր գործողությունները հաճախորդների ներգրավման ուղղությամբ:

Շնորհակալություն ենք հայտնում մեր Հաճախորդներին և Գործընկերներին՝ Բանկի հանդեպ ցուցաբերած վստահության և աջակցության համար:

Գործադիր տնօրեն



Գևորգ Մաչանյան

ՆԱԾԱԽՈՐԴԻ ԿԱՐԵՎՈՐՈՒՄ

Մենք ձգտում ենք հաճախորդների հետ հասնալ
և զարգացնել կայուն և երկարատև համագործակցություն





ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ-ն երկրորդ տարին է, որ գործունեություն է իրականացնում ֆինանսական ոլորտում: Բանկն իր գործունեության իրականացման ընթացքում հավատարիմ է իր բիզնես փիլիսոփայության հիմնարար արժեքներին, որոնք են հաճախորդի կարևորում, հուսալիություն, շիտակություն, շրջահայացություն, կոնֆիդենցիալություն, թափանցիկություն, արհեստավարժություն, գործընկերություն, անվտանգություն և հստակություն:

Բանկը, հրաժարվելով մասսայական բանկային սպասարկումից, իր գործունեությունը ծավալում է երեք հիմնական ուղղություններով՝ մասնագիտանալով միջազգային պրակտիկայում ընդունված կորպորատիվ, ներդրումային և փրայվիթ բանկային (corporate, investment և private banking) ծառայությունների մատուցման ուղղությամբ: Մասսայական սպասարկումից հրաժարվելը նշանակում է, որ Բանկը ծառայություններ չի մատուցում Բանկում հաշիվ չունեցող անձանց և ջանքերը կենտրոնացնում է իր հաճախորդների կարիքների առավելագույն բավարարման ուղղությամբ:

Կորպորատիվ բենքինգը ներառում է իրավաբանական անձանց մատուցվող բանկային ծառայությունների համալիր փաթեթի տրամադրում, որն իր մեջ ներառում է ինչպես անհատական պահանջներին հարմարեցված ավանդական ծառայությունների մատուցումը (վճարահաշվարկային, վարկային ծառայություններ, դեպոզիտային ճկուն սխեմաներ, առևտրի ֆինանսավորումը), այլև, ինչն առավել կարևոր է, ոչ ավանդական ծառայությունների մատուցումը, ինչպիսիք են այլընտրանքային ֆինանսավորումը, ֆինանսական ածանցյալ գործիքները, ֆակտորինգը, ֆինանսական խորհրդատվության մատուցումը և այլ ծառայություններ: Ծառայությունների նշված փաթեթը հնարավորություն է տալիս հաճախորդներին ավելի արդյունավետ դարձնել իրենց ֆինանսական գործունեության պլանավորումը, բազմազանեցնել (դիվերսիֆիկացնել) շուկայական ռիսկերը, հնարավորինս զսպել արտարժույթների փոխարժեքների տատանումների հետևանքով առաջացող ռիսկերը և նվազեցնել կորուստները:

Ներդրումային ծառայությունները ներառում են հաճախորդներին արտաքին և ներքին շուկաներում տրամադրվող պարտքային գործիքների և այլ արժեթղթերում ներդրումների իրականացման հետ կապված ծառայությունների լայն շրջանակ՝ արժեթղթերի անհատական, կոլեկտիվ և այլ տիպի պորտֆելների ձևավորումից մինչև ակտիվների հավատարմագրային կառավարման, բրոքերային և պահառուական ծառայությունների մատուցումը, ներդրումային գործառնությունների վերաբերյալ խորհրդատվության մատուցումը: Այս ուղղությամբ Բանկի աշխատանքները կակտիվաճան արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրական դաշտում առաջիկայում նախատեսված փոփոխություններից և Բանկի կողմից համապատասխան լրացուցիչ լիցենզիաների (պահառուական, բրոքերային, ակտիվների հավատարմագրային կառավարման) ստացումից հետո:

Փրայվիթ բենքինգը ֆիզիկական անձանց, այսպես կոչված "tailor-made" անհատական և փաթեթային բարձրակարգ ծառայությունների մատուցման ամբողջական համակարգ է, որն ուղղված է Բանկի և հաճախորդի միջև երկարատև համագործակցությանը: Փրայվիթ բենքինգը լոկ բարձրակարգ սպասարկում չէ, այլ հաճախորդների անհատական պահանջները բավարարելու բիզնես-փիլիսոփայություն, որն արտահայտվում է հաճախորդի խնդիրներին իրեն սեփական խնդիրների դիտարկմամբ և առավել օպտիմալ լուծումների տրամադրմամբ: Բանկը հետևողականորեն ներդնում է փրայվիթ բենքինգի հիմնարար սկզբունքները, և արժեթղթերի շուկայի մասնագիտացված գործունեության լիցենզիաների ստացումը կնպաստի դրա զարգացմանը Բանկում:

Հաճախորդների հետ հարաբերությունների կառուցման մոտեցումները և դրույթները ներկայացվում են «Հաճախորդներ և գործընկերներ Գործունեության հիմնարար բաժնում»:

ՄԱՏՈՒՅՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկի կողմից մատուցվող ծառայությունները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ ավանդական բանկային ծառայություններ և ներդրումային բանկային ծառայություններ:

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կիրառելով կորպորատիվ և փրայվիթ բենքինգին բնորոշ սպասարկման տեխնոլոգիաները՝ Բանկն իր հաճախորդներին առաջարկում է ունիվերսալ բանկային ծառայություններ՝ վարկավորումից և ավանդների ընդունումից մինչև վճարահաշվարկային ծառայություններ և առևտրի ֆինանսավորում:

Վճարահաշվարկային ծառայություններ

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ում հաշիվ ունենալն առաջին քայլն է Բանկի ծառայություններից օգտվելու հնարավորությունների ճանապարհին: Այն թույլ է տալիս ընտրել վճարման, ներդրման և ֆինանսավորման պահանջները բավարարող բազմաթիվ լուծումներ:

Ելնելով Բանկում գործող հաճախորդների սպասարկման քաղաքականությունից և «Ճանաչիր հաճախորդիդ (Know Your Customer rules) սկզբունքներից՝ Բանկը ծառայություններ չի մատուցում Բանկում հաշիվ չունեցող կամ Բանկի հաճախորդ չհանդիսացող անձանց:

Արտարժույթային և դրամային հաշիվների միջոցով Բանկի հաճախորդները կարող են իրականացնել վճարումներ և օգտվել ներդրումային գործիքներից:

Վճարումներ ՀՀ դրամով

Հանդիսանալով Հայաստանի միջբանկային համախառն էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակից՝ ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը դրամային փոխանցումներն իրականացնում է սեղմ ժամկետներում և նվազագույն ծախսերով: Ֆինանսական շուկայում Բանկի դերի մեծացման և գործառնությունների ընդլայնման արդյունքում 2006թ.-ին աճել է ՀՀ դրամով թղթակցային հաշիվների շրջանառությունը՝ կազմելով 150.5 մլրդ դրամ:

Միջազգային վճարումներ

Անդամակցությունը SWIFT միջազգային վճարումների համակարգին և գործընկերային հարաբերությունները մի շարք միջազգային հզոր ֆինանսական հաստատությունների հետ, ինչպիսիք են՝ UBS AG, Raiffeisen Zentralbank Osterreich AG, Commerzbank AG, International Moscow Bank, Rietumu Banka, թույլ են տալիս Բանկին հաճախորդների միջազգային վճարումներն իրականացնել արագ և հուսալի: Բանկի թղթակից բանկերի ցանցում ավելացել է նաև նոր գործընկեր՝ Promsvyazbank JSCB բանկը: Նոր ծառայությունների մատուցմանը և հաճախորդների թվի աճին զուգընթաց կարուկ աճել է արտարժույթով թղթակցային հաշիվների շրջանառությունը՝ դրամային արտահայտությամբ կազմելով 95.7 մլրդ դրամ:

Արտարժույթային գործառնություններ

Օգտագործելով իր թղթակից բանկերի ցանցը՝ ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն իր հաճախորդներին և գործընկերներին առաջարկում է տեղական և միջազգային շուկաներում մրցունակ արտարժույթի փոխանակման փոխարժեքներ՝ ցուցաբերելով անհատական մոտեցում և փոխանակման օպերատիվություն: Արտարժույթների փոխարժեքների տատանման հետևանքով առաջացող ռիսկերի զսպման նպատակով Բանկն իր հաճախորդներին առաջարկում է նաև արտարժույթային ռիսկի կառավարման գործիքակազմ՝ արտարժույթային ֆորվարդ և սփոպ գործիքներ, որոնք գնանշվում են ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ հիմնական արտարժույթներով (EUR, USD և այլն):

Ավանդներ

Բանկն առաջարկում է հաճախորդների ազատ միջոցների տեղաբաշխման պահանջները բավարարող ներդրումային լայն հնարավորություններով ավանդային ծրագրեր, որը թույլ է տալիս ստանալ երաշխավորված եկամուտ և ընտրել ավանդներ՝ ըստ արտարժույթի տեսակի, մարման ժամանակահատվածի, տոկոսագումարների վճարման պարբերականության: Մասնավորապես, իրավաբանական անձանց ուշադրության են արժանի կարճաժամկետ (սկսած 7 օրից) ժամկետային ավանդները: Հաշվի առնելով հաճախորդների հետաքրքրությունը Բանկի կողմից առաջարկվող ավանդների նկատմամբ և դրանց հասանելիությունը ապահովելու նպատակով՝ Բանկն իջեցրել է ավանդների ներգրավման նվազագույն անձանց համար՝ ֆիզիկական անձանց համար 2 մլն դրամ կամ 5.000 ԱՄՆ դոլար, իսկ իրավաբանական անձանց համար՝ համապատասխանաբար 5 մլն դրամ և 10.000 ԱՄՆ դոլար: Ֆինանսական շուկայի փոփոխություններին զուգընթաց Բանկն օպերատիվ կերպով վերանայում է ավանդների տոկոսադրույքները՝ առաջարկելով շուկայում մրցունակ տոկոսադրույքներ: ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը հայկական շուկայում եզակի բանկերից է, որն իր կորպորատիվ հաճախորդների բանկային ցայահանջ հաշիվների մնացորդների դիմաց վճարում է մրցունակ տոկոսադրույքներ: 2006թ.-ին կարուկ աճել է ՀՀ դրամով ներդրված ավանդների ծավալը՝ կազմելով 355.3 մլն դրամ, միևնույն ժամանակ ներդրվել է 946.4 հազ. ԱՄՆ դոլարի և 24.2 հազ. եվրոյի ավանդ:

Ֆինանսավորում

Արագ զարգացող բիզնես-միջավայրում հաջող գործունեություն ծավալելու համար Բանկն իր հաճախորդներին առաջարկում է ֆինանսավորման ավանդական և ժամանակակից գործիքների բավականին լայն շրջանակ, որը թույլ է տալիս Բանկի հաճախորդներին բավարարել իրենց ֆինանսական կարիքները՝ համապատասխան լուծումներ ընտրելու միջոցով:

Վարկավորում

Բանկը նախապատվություն է տալիս կայացած կորպորատիվ հաճախորդների վարկավորմանը, որոնք ունեն կայուն գործող բիզնես և բարի համբավ գործարար աշխարհում: Բանկը հետաքրքրված է համագործակցել այնպիսի հաճախորդների հետ, որոնք Բանկի համար երկարաժամկետ գործընկեր դառնալու և Բանկի հետ նաև այլ ծառայությունների գծով համագործակցելու ակնկալիքներ ունեն: Ֆիզիկական անձանց ներգրավումը Բանկը նույնպես դիտարկում է վերոհիշյալ քաղաքականության ներքո:

Բանկի հետ համագործակցության դրական պատմություն ունեցող հաճախորդներին Բանկը, ելնելով հաճախորդի անհատական կարիքներից, առաջարկում է.


- ☐ առավել բարենպաստ պայմաններ՝ ժամկետների և տոկոսադրույքների մասով,
- ☐ տարբեր վարկային գործիքների համակցություն,
- ☐ ներդրողների ներգրավում՝ վարկերի համաֆինանսավորման նպատակով:

2006թ.-ը Բանկի համար նշանակալի էր նրանով, որ Բանկի կողմից հաճախորդներին առաջարկվեց վարկավորման 2 նոր գործիք՝ դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորում (ֆակտորինգ) և դրամական հոսքերի ապահովության վարկերի տրամադրում՝ առավել ընդլայնելով վարկավորման գործիքների շրջանակը: Այս գործիքների գրավչությունը պայմանավորված է դրանց օգտագործման ճկունությամբ և մատչելիությամբ:

Ավելին, ֆակտորինգային ծառայությունների մատուցմանը զուգահեռ Բանկն ակտիվ համագործակցել է «Բերինգ Փոյնթ» կազմակերպության հետ, որը ՀՀ-ում իրականացնում է ԱՄՆ ՄՁԳ Առևտրային իրավունքի և տնտեսական կարգավորման ծրագիրը: Այդ համագործակցությունը նպատակաուղղված է Բանկի կողմից մատուցվող ֆակտորինգային ծառայությունների ներքին կանոնակարգմանը, կադրերի վերապատրաստմանը և այլն: Բանկն իրականացրել է ավանդի գրավով արագ վարկավորում, ինչպես նաև կատարել է վարկերի վերաֆինանսավորման (պարտքի զիջում) առաջին փորձը, որը հաճախորդներին առաջարկվելու է նաև հետագայում:


Բանկը վարկավորման բնագավառում կարևորում է համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ: Ըստ այդմ, 2006թ.-ին Բանկը մասնակցել է KfW-ի և ՀՀ ԿԲ-ի միջև կնքված «Վերականգնվող էներգիայի զարգացում» վարկային պայմանագրով նախատեսված ծրագրին և ընտրվել է որպես գործընկեր բանկ: Նշված ծրագրի իրականացումը նախատեսվում է 2007թ.-ին:

Կարևորելով վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիայի ապահովումը՝ Բանկը հետևում է տնտեսության բոլոր ճյուղերի և հատվածների միտումներին ու զարգացումներին: 2006թ.-ի ընթացքում վարկավորվել են ստորև ներկայացված ոլորտներում գործող ընկերություններին.



Առևտրի ֆինանսավորում և երաշխիքներ

Բանկն իր հաճախորդներին առաջարկում է միջազգային առևտրի ֆինանսավորման համար նախատեսված ֆինանսական գործիքներ (փաստաթղթային ակրեդիտիվ, ինկասո, երաշխիք), որոնք ձեռնառու են ինչպես արտահանողներին, այնպես էլ ներմուծողներին և թույլ են տալիս նվազեցնել առևտրային ռիսկերն ու պարզեցնել վճարման գործընթացները: Ավելին՝ շնորհիվ փորձառու անձնակազմի, գործընկեր-բանկերի ցանցի և տեխնոլոգիաների իմացության՝ Բանկը հուսալի միջնորդ է միջազգային առևտրում փոխշահավետ գործունեություն ծավալելիս: 2006թ. Բանկը սկսել է մատուցել ոչ միայն ներքին, այլ նաև միջազգային առևտրի ֆինանսավորման ծառայություններ, մասնավորապես տրամադրվել են պայմանագրի կատարման և տեղեկատվության երաշխիքներ:



ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական շուկաներում գործառնություններ

Բանկի հիմնական ռազմավարական ուղղություններից է ներդրումային բանկային գործունեությունը: Այդ իսկ պատճառով իր ստեղծման օրվանից սկսած Բանկի գործողություններն ուղղված են այդ ռազմավարական ուղղության ձևավորմանն ու զարգացմանը:

12

Բանկը 2006թ.-ի ընթացքում շարունակել է ակտիվորեն իրականացնել ՀՀ պետական արժեթղթերով գործառնություններ ներքին ֆինանսական շուկայում: Այսպես՝ տարվա ընթացքում երկրորդային շուկայում Բանկն իրականացրել է մոտ 26 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեթղթով պարտատոմսերի առք ու վաճառք, իսկ պարտատոմսերով իրականացված ռեպո գործառնությունների ծավալը կազմել է ավելի քան 44 մլրդ դրամ: Չուգահեռաբար Բանկը պահպանել է իր մասնակցության ակտիվությունը նաև առաջնային տեղաբաշխումներին՝ տարվա ընթացքում գնելով մոտ 3 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեթղթով պարտատոմսեր: Այդ ակտիվության շնորհիվ է, որ 2006թ.-ին Բանկը դարձավ պետական պարտքի կառավարման գծով ՀՀ կառավարության գործակալ:

Տարվա ընթացքում Բանկը շարունակել է մասնակցել Հայաստանի ֆոնդային բորսայում իրականացվող արտարժույթի առք ու վաճառքի սակարկություններին, հանդես է եկել միջբանկային անկանխիկ արտարժույթային շուկայում՝ իրականացնելով միջազգային հիմնական փոխարկելի արժույթներով առք ու վաճառքի գործառնություններ, որոնց ընդհանուր ծավալը կազմել է մոտ 208 մլրդ դրամ: 2006թ.-ին Բանկն իր հաճախորդներին և գործընկերներին առաջարկեց արտարժույթային ռիսկի կառավարման գործիքակազմ՝ արտարժույթային ֆորվարդ և սվոպ գործիքներ, որոնք Բանկն ամեն օր գնանշում է: Բանկի կողմից արդեն իսկ իրականացվել են 4.9 մլրդ ՀՀ դրամի սվոպ և 220 մլն ՀՀ դրամի ֆորվարդ գործառնություններ:

Հատկանշական է այն, որ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ-ն պատկանում է ՀՀ տարածքում գործող այն եզակի բանկերի թվին, որոնք իրականացնում են ՀՀ դրամի, ՀՀ պետական պարտատոմսերի և արտարժույթային ֆորվարդ ու սվոպ փոխարժեքների գնանշում Reuters համակարգում, իսկ 2007թ.-ի հունվարից՝ ՀՀ դրամի և հիմնական արտարժույթների, ինչպես նաև ՀՀ պետական պարտատոմսերի, ֆորվարդային, միջբանկային ավանդային և ռեպո գործառնությունների տոկոսադրույքների գնանշում նաև Bloomberg տեղեկատվական համակարգի՝ Բանկին պատկանող էջում:

Բանկը շարունակում է ներդրումներ իրականացնել ՀՀ ԿԲ և Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերում, ՀՀ ԿԲ-ի կողմից վարկանիշ ստացած կազմակերպությունների կողմից թողարկված կորպորատիվ արժեթղթերում, զարգացած երկրների ֆիքսված եկամտաբերությամբ արժեթղթերում, մասնավորապես ԱՄՆ-ի, եվրոպական երկրների, Ռուսաստանի Դաշնության, ինչպես նաև ՀՀ ԿԲ նորմատիվային դաշտի և Բանկի խորհրդի կողմից ընդունելի ռիսկի շրջանակներում ներդրումային վարկանիշ (investment grade) ունեցող այլ երկրների պետական պարտատոմսերում և բարձր վարկանիշ ունեցող կորպորատիվ արժեթղթերում:

Բանկն ակտիվ գործունեություն է ծավալում ինչպես ՀՀ տարածքում՝ բանկերում տեղաբաշխելով և ներգրավելով կարճաժամկետ ու միջնաժամկետ դեպոզիտներ, այնպես էլ միջազգային փողի շուկայում՝ ներդնելով դեպոզիտներ արտասահմանյան առաջնակարգ բանկերում: Վերջիններիս ընդհանուր ծավալը դրամային արտահայտությամբ կազմել է 63 մլրդ դրամ:

Բանկը դեռևս 2005թ.-ին ձեռք էր բերել ԱՄՆ-ի և Ռուսաստանի Դաշնության պետական պարտատոմսեր: Սակայն 2006թ.-ին միջազգային շուկաներում տոկոսադրույքների զգալի տատանումների հետևանքով Բանկն ավելի պասիվ էր սպեկուլյատիվ շուկայում: Բանկն իր արտասահմանյան արժեթղթերի պորտֆելի միջոցով կառավարում է կարճաժամկետ և միջնաժամկետ դրամական իրացվելիությունը՝ հակադարձ ռեպո գործարքներ իրականացնելով օտարերկրյա գործընկերների հետ, որը լրացուցիչ գործիք է միջազգային շուկաներից օգտվելու և նոր հնարավորություններ ստեղծելու համար: 2006թ.-ին Բանկը ներդրումներ է կատարել նաև միջազգային ներդրումային հիմնադրամների փայտերում, ինչպես նաև գործառնություններ է իրականացրել միջազգային ինդեքսների և բաժնետոմսերի տարբերության պայմանագրերով՝ մոտ 5 մլրդ ՀՀ դրամ ծավալի: Վերջինս Բանկի համար չի հանդիսանում երկարաժամկետ ներդրումային գործիք, այլ գործիքակազմն ընդլայնելու և հաճախորդներին ներդրումային նոր հնարավորություններ առաջարկելու նպատակ է հետապնդում:

Հաճախորդներին մատուցվող ներդրումային բանկային ծառայություններ

Բանկը 2006 թվականին իր կազմակերպական կառուցվածքում ստեղծել է առանձին ստորաբաժանում, որի հիմնական առաքելությունն է Բանկի հաճախորդներին միջազգային չափանիշներին համապատասխան ներդրումային բանկային ծառայությունների մատուցումը և ֆինանսական շուկայում նոր գործիքների ներմուծումը:

Քանի որ ներդրումային բանկային գործունեությունը Բանկի զարգացման ռազմավարական ուղղություններից է, Բանկը ողջունում է ֆինանսական շուկայի զարգացմանն ու նոր ֆինանսական գործիքների ներդրմանն ուղղված ցանկացած նախաձեռնություն: Այդ իսկ պատճառով Բանկը առաջիններից է ձեռք բերել «Շեն Կոնցեռն ՓԲԸ-ի կողմից թողարկված կորպորատիվ պարտատոմսերը, իսկ այնուհետև չ՛ է ֆինանսական շուկայում առաջին անգամ ԿԲ հետ ռեպո գործարք կնքել կորպորատիվ պարտատոմսերով:

Արդեն իսկ կնքված պայմանագրերի շրջանակում Բանկը 2007թ ընթացքում ֆինանսական խորհրդատվություն է մատուցելու չ՛ է ԿԲ կողմից վարկանշված առնվազն 2-3 հայտնի կազմակերպություններին կորպորատիվ պարտատոմսերի թողարկման վերաբերյալ:

2006 թվականից սկսած Բանկն իրականացրել և շարունակում է իրականացնել արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեության (արժեթղթերի պահառության, բրոքերային գործունեության և արժեթղթերի հավատարմագրային կառավարման) լիցենզիաների ստացման և այդ գործունեությունների կանոնակարգման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներ: Բանկի կողմից 2006 թվականի ընթացքում վերոնշյալ լիցենզիաների չստացումը պայմանավորված է եղել օրենսդրական դաշտի ակնկալվող փոփոխության հետաձգմամբ: Բանկի կանխատեսումներով լիցենզավորման աշխատանքները կավարտվեն 2007 թվականի 1-ին կիսամյակում:

Բանկն ակտիվ մասնակցություն է ունեցել չ՛ է արժեթղթերի շուկայի և ֆինանսական միջնորդության ոլորտի օրենսդրական դաշտի բարեփոխումներին վերաբերող նախաձեռնություններում: Մասնավորապես՝ Բանկն ակտիվ համագործակցություն է ձևավորել չ՛ է կենտրոնական բանկի և տարբեր միջազգային կառույցների և կազմակերպությունների հետ (OMX, FSDP, Համաշխարհային բանկ)՝ իր առաջարկությունները և տեսակետները ներկայացնելով կազմակերպված քննարկումների ժամանակ:

ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼԻՉՄ

Լավագույն արդյունքների հասնելու նպատակով՝ մեր փորձառու և առաջադեմ մասնագետները մշտադեմ բարձրացնում են իրենց մասնագիտական դասրասվածությունը և փոխանակվում են իրենց գիտելիքներով և փորձով





ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բանկի ստեղծման պահից Հիմնադիրը և Խորհուրդը կարևորել են արդյունավետ կորպորատիվ կառավարման համակարգի ստեղծումը: Բանկն իր կորպորատիվ կառավարման համակարգը կառուցել է «սահմանափակումների և հակակշիռների (checks and balances) միջազգայնորեն ընդունված սկզբունքների հիման վրա, որն արտահայտվում է իր գործունեության ընթացքում հետևյալ հիմնական դրույթների անվերապահորեն կիրառմամբ:

☐ **Լիազորությունների և պարտականությունների հստակ տարանջատում:** Բանկի բոլոր աշխատակիցները, ղեկավարները և կոլեգիալ մարմիններն ունեն իրենց լիազորությունները և պարտականությունները սահմանող ներքին ակտեր:

☐ **Բաժնետիրոջ, Խորհրդի, Գործադիր մարմնի, Ներքին և Արտաքին ատոլիտորների միջև արդյունավետ համագործակցություն, ինչն ամրագրված է կորպորատիվ վարքագծի կանոններում:** Բանկի ներքին և արտաքին ատոլիտորների կողմից արված առաջարկությունները համակողմանիորեն քննարկվում են՝ կառավարման համակարգը կատարելագործելու նպատակով:

☐ **Հուսալի ներքին հսկողության համակարգի առկայություն, որը կապահովի ռիսկերի անընդհատ և շարունակական մոնիտորինգ:** Բանկի ներքին հսկողության համակարգն ունի երկու մակարդակ՝ ինքնահսկման (ներքին հսկման) և վերահսկման: Յուրաքանչյուր ստորաբաժանում և աշխատակից, ելնելով իր լիազորություններից և պարտականություններից, ինքնուրույն է հսկում իր կողմից իրականացվող գործառնությունների կատարման ճշտությունը: Այդ գործառնությունների իրականացման ճշտության և կանոնակարգիչ ակտերին համապատասխանության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Բանկի ներքին ատոլիտի և ռիսկերի կառավարման ստորաբաժանումների կողմից: Ռիսկերի կառավարման ստորաբաժանումն ամենօրյա հսկողություն է իրականացնում ֆինանսական ռիսկեր պարունակող գործառնությունների նկատմամբ: Միևնույն ժամանակ, Խորհրդի կողմից հաստատված տարեկան ծրագրի համաձայն, Բանկի Ներքին ատոլիտի ստորաբաժանումն իրականացնում է Բանկի գործունեության տարբեր ոլորտների ստուգում: Ներքին հսկման համակարգի արդյունավետությունն ապահովվում է ստորաբաժանումների միջև իրավասությունների և պարտականությունների հստակ տարանջատման և փաստաթղթավորման առկայության, ինչպես նաև համադրումների կիրառման շնորհիվ:

☐ **Առավել ռիսկային ոլորտներում որոշումների կայացման կոլեգիալություն:** Բանկում գործում են որոշումների կայացման և խորհրդակցական կոլեգիալ մարմիններ՝ Ակտիվների և պասիվների կառավարման, Վարկային, Ներդրումային կոմիտեներ, Ֆինանսական դիտարկումների, Գործունեության համապատասխանության հսկման, Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման և Բյուջետային հանձնաժողովներ:

☐ **Գործարքների և ռիսկային գործառնությունների կատարում առնվազն երկու անձի մասնակցությամբ:** Բանկում գործառնությունների իրականացմանը մասնակցում են առնվազն երկու աշխատակից, իսկ առավել ռիսկային գործառնություններում՝ նույնիսկ երեքը: Այդ ամենն ամրագրված է համապատասխան ներքին ակտերով:

☐ **Հաշվետվողական և տեղեկատվական կայուն համակարգի առկայություն:** Բանկում գործում է հաշվետվողականության համակարգ, որի նպատակն է Բանկի կառավարման մարմիններին և ստորաբաժանումներին ապահովել համապարփակ տեղեկատվությամբ՝ ռիսկերը կառավարելու և սահմանափակելու, որոշումներ կայացնելու, հսկողություն իրականացնելու նպատակով:


☐ **Կորպորատիվ վարքագծի արժեքների պահպանում:** Բանկում մշակվել և Խորհրդի կողմից հաստատվել է «Կորպորատիվ վարքագծի կանոններ փաստաթուղթը, որը սահմանում է այն արժեքները, որոնցով պետք է առաջնորդվի Բանկն իր հաճախորդների, գործընկերների, պետական մարմինների, աշխատակիցների հետ փոխհարաբերություններում:

☐ **Հստակ շեղանկով ռազմավարական ծրագրի առկայություն:** Յուրաքանչյուր տարվա համար Խորհրդի կողմից հաստատվում է Բանկի ռազմավարական ծրագիր, որը սահմանում է Բանկի կարճաժամկետ, միջաժամկետ և երկարաժամկետ նպատակները, նպատակային ֆինանսական ցուցանիշները, ծախսերը, եկամուտները և միջոցառումները:

2006 թվականի ընթացքում Բանկի կորպորատիվ կառավարման համակարգում տեղի են ունեցել էական բարեփոխումներ, որոնք պայմանավորված էին ոչ միայն օրենսդրական պահանջների փոփոխությամբ, այլ նաև Բանկի՝ միջազգային լավագույն փորձը կիրառելու և ներդնելու ձգտմամբ: Բանկի Խորհուրդը համալրվել է ֆինանսական և բիզնեսի կառավարման ոլորտի 3 փորձառու մասնագետով՝ ինչպես Հայաստանի Հանրապետությունից, այնպես էլ Շվեյցարիայից, որոնք էլ ավելի ամրապնդելու և բարելավելու են Բանկի կորպորատիվ կառավարումը և ներքին հսկողությունը:

Բանկի կորպորատիվ կառավարման համակարգը սխեմատիկորեն կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

16




ԱՆՉՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2006թ.-ի ընթացքում Բանկը համալրել է իր անձնակազմը ինչպես փորձառու կադրերով, այնպես էլ երիտասարդ մասնագետներով (17 նոր աշխատակից), որոնք ակտիվորեն ներգրավվել են Բանկի աշխատանքներում և իրականացվող նախագծերում: Բանկի առանցքային աշխատակիցները Հայաստանի ֆինանսաբանկային համակարգում ունեն բազմամյա աշխատանքային փորձ: Բանկի բոլոր աշխատակիցներն ունեն բարձրագույն կրթություն, որոնցից վեցը՝ տնտեսագիտական գիտությունների թեկնածուի աստիճան, մեծամասնությունը տիրապետում է օտար լեզուների: Անձնակազմն առանձնանում է ոչ միայն իր փորձառությամբ, այլ նաև մասնագիտական խորը գիտելիքներով և անձնական հատկանիշներով: Աշխատակիցների միջին տարիքը կազմում է 29 տարեկան: Կարևոր տեղ է հատկացվում վերապատրաստումներին. տարվա ընթացքում աշխատակիցները մասնակցել են դասընթացների և սեմինարների ինչպես Բանկում (թվով 25 սեմինար), այնպես էլ Բանկից դուրս (23 աշխատակից): Բանկի մեկ աշխատակից դարձել է ACCA-ի (Association of Chartered Certified Accountants) անդամ:

Բանկում մշակված Անձնակազմի կառավարման քաղաքականությունը հստակ սահմանում է աշխատակիցների հավաքագրման կարգը, վերապատրաստման խնդիրները, վարձատրության և պարգևատրման հարցերը, աշխատակիցների պաշտոնների բարձրացման կամ ղեկավար պաշտոնի նշանակելու գործընթացը, յուրաքանչյուր աշխատակցի հետ՝ նրա կատարած աշխատանքների քննարկման և զնահատման գործընթացները:


Բանկի գործունեության և զարգացման փուլերին համահունչ փոփոխվել է Բանկի կառուցվածքը՝ ստեղծվել են նոր բաժիններ և երկու նոր ղեկարտամենտ՝ Ջարգացման և կազմակերպական ու Կորպորատիվ ֆինանսների և վարկավորման, որի արդյունքում բարձրացել է Բանկի կառավարման մակարդակը և ծառայությունների մատուցման արդյունավետությունը:


Բանկի կառուցվածքը.



ՇՐՋԱՆԱՅԱՇՈՒԹՅՈՒՆ

Կիրառելով որոշումների կայացման կոլեգիալության սկզբունքը՝ մենք ադահովում ենք վերջիններիս կայացման արդյունավետությունը՝ սարքերակելով ռիսկերը, դրանք դարձնելով վերահսկելի և կանխատեսելի





ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բանկի կառավարման մարմինները կարևորում են ռիսկերի արդյունավետ կառավարումը և կառավարման անընդհատության ապահովումը: Ռիսկերի կառավարման գործընթացում ընդգրկված են ինչպես Բանկի Խորհուրդը և Գործադիր տնօրենը, այնպես էլ Բանկի յուրաքանչյուր աշխատակից: Ռիսկերի վերլուծությունը կազմում է Բանկի ռազմավարական պլանավորման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի գնահատման անբաժանելի մասը:

Բանկն ունի **Ռիսկերի կառավարման ստորաբաժանում**, որն անկախ է գործարքներ իրականացնող ստորաբաժանումներից և ամենօրյա հսկողություն է իրականացնում ֆինանսական շուկաներում գործառնությունների նկատմամբ՝ ստուգելով առավել ռիսկային գործարքները և հետևելով Բանկի ներքին նորմատիվային դաշտին:

Բանկում մշակված և ներդրված է վարկային, շուկայական, իրացվելիության և գործառնական ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ՝ հիմնված ռիսկերի գնահատման և զսպման ժամանակակից մեթոդների ու տեխնոլոգիաների վրա: Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը, ըստ անհրաժեշտության, մշակում և վերանայում է ներդրումային ուղեցույցների գործող ուղեցույցը և ներդրումային սահմանափակերը: Բանկում գործում են վարկային ռիսկի գնահատման, 2006թ.-ից նաև՝ արտարժույթային գործառնությունների սահմանափակերի որոշման մեթոդական ուղեցույցներ, որոնց նպատակն է առանձնացնել և քանակական գնահատականներ տալ այն գործոններին, որոնք ազդում են հաճախորդների վարկային ռիսկի աստիճանի որոշման վրա:

Բանկում գործում է **Ներքին աուդիտի ստորաբաժանում**, որը վերահսկում է Բանկի գործունեության համապատասխանությունը Բանկի Խորհրդի և Գործադիր մարմնի կողմից ընդունված ներքին ակտերին (քաղաքականություններ, կանոնակարգեր, կարգեր և այլն), ինչպես նաև ստուգումների միջոցով բացահայտում է ռիսկերը:

Բանկի Խորհուրդ: Բանկի Խորհուրդը սահմանում է Բանկի վարկային և ներդրումային գործունեությունների նորմատիվներ, սահմանափակեր, ուղեցույցներ, ներդրումային ուղեցույցներ, վարկառուների ընտրության չափանիշներ, գրավների նկատմամբ պահանջներ, ներդրումների իրականացման ուղղություններ, գործընկերների ընտրության չափանիշներ և այլն, որոնք սահմանափակում են Բանկի վարկային և շուկայական ռիսկերը: Բանկն իր գործառնություններն իրականացնում է՝ ելնելով Խորհրդի կողմից սահմանված պահանջներից:

Կոլեգիալ մարմիններ: **Ակտիվների և պասիվների կառավարման կոմիտե** կոչված է կառավարելու իրացվելիության ռիսկը: Այն իր հերթին, այլ գործառնությունների հետ մեկտեղ, սահմանում է Բանկի Խորհրդի հաստատած և ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նորմատիվներից ավելի խիստ նորմատիվներ և սահմանափակումներ, որոնք հիմնականում ունեն նախազգուշական բնույթ: Այս կոմիտեի գործառնություններից է նաև Բանկի ռազմավարությանը նախատեսված խնդիրների և միջոցառումների իրականացման պարբերական մոնիտորինգը: **Վարկային կոմիտե**, առաջնորդվելով Խորհրդի կողմից հաստատված Վարկային քաղաքականությամբ, օպերատիվ կառավարում է վարկային ռիսկը՝ իր լիազորությունների շրջանակում որոշումներ կայացնելով վարկերի տրամադրման կամ մերժման վերաբերյալ: **Ներդրումային կոմիտե** պարտականությունների մեջ մտնում է ֆինանսական շուկաներում առաջացող շուկայական ռիսկի գնահատումը և համապատասխան ներդրումային լուծումների մշակումն ու առաջարկումը: Բանկում գործում է **Բյուջետային հանձնաժողով**, որը որոշումներ է կայացնում Բանկի կողմից խոշոր ձեռքբերումների վերաբերյալ և կառավարում է կառավարչական ծախսերի կատարումը:

Բանկի գործունեության կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2006 թվականին ստեղծվել են **Ֆինանսական դիտարկումների, Գործունեության համապատասխանության հսկման և Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման հանձնաժողովներ**, որոնց գործունեությունն ուղղված են ներքին աշխատանքների կազմակերպման, կարգավորման և վերահսկման գործընթացների բարելավմանը: **Ֆինանսական դիտարկումների** հանձնաժողովը աշխատանքներ է տանում կասկածելի գործարքների հայտնաբերման և կանխման, փողերի վաճառման դեմ պայքարի ուղղությամբ: **Գործունեության համապատասխանության հսկման** հանձնաժողովը իրավական ռիսկերը զսպելու համար է, ինչը թույլ է տալիս հնարավորինս արագ արձագանքել իրավական, օրենսդրական և այլ փոփոխություններին: Վերոնշյալ մարմինների որոշումները հասանելի և թափանցիկ են համապատասխան աշխատակիցների համար, ինչն էլ նրանց հնարավորություն է տալիս իրենց պարտականությունները կատարելիս առաջնորդվել Բանկի կողմից որդեգրած քաղաքականությամբ:

Բանկի Գործադիր տնօրեն: Գործադիր տնօրենը՝ կազմակերպում է ռիսկերի կառավարման գործընթացը՝ ղեկավարելով Բանկում գործող կոլեգիալ մարմինները, անհրաժեշտության դեպքում ստեղծելով աշխատանքային խմբեր, կազմակերպելով խորհրդակցություններ, իր լիազորությունների շրջանակում որոշումներ կայացնելով Բանկի ընթացիկ գործունեության վերաբերյալ:

Ստորաբաժանումներ: Բանկի յուրաքանչյուր ստորաբաժանում և աշխատակից անշեղորեն հետևում է Բանկում գործող ներքին ակտերին, որոնք կանոնակարգում են Բանկի գործունեության բոլոր ոլորտները: Բանկի գործառնական ռիսկերը սահմանափակելու նպատակով Բանկում բոլոր գործառնությունները կատարվում են առնվազն երկու անձի (աշխատակցի) մասնակցությամբ: Բանկում գործում են աշխատակիցների իրավասությունները և պարտականությունները հստակ տարանջատող ներքին ակտեր, ինչպես նաև «խաչվող հաշվետվությունների համակարգ»:

ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Փոխշահավետ արդյունքների հասնելու նպատակով՝ մենք արժեքավորում ենք հաճախորդների և գործընկերների հետ երկարատև ու շարունակական համագործակցությունը

ՀԱՃԱԽՈՐՂՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ - ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՔԱՐ

Բանկն արժեքավորում է հաճախորդների և գործընկերների հետ երկարատև, շարունակական և փոխշահավետ համագործակցությունը:

Բանկի հարաբերությունները հաճախորդների և գործընկերների հետ կառուցվում են օրինականության, բարեխղճության, ազնվության, փոխադարձ վստահության և հարգանքի, հաճախորդի շահերի առաջնայնության, պարտավորությունների անխախտելիության սկզբունքների հիման վրա:

Հաճախորդների սպասարկման ոլորտում Բանկը ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ և ներքին ակտերով, հաճախորդների սպասարկման քաղաքականությամբ, ինչպես նաև փրայվիթ բենքինգի բիզնես-փիլիսոփայությամբ, որը հիմնվում է միջազգային պրակտիկայում ընդունված և կիրառվող հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

- ☐ հաճախորդին վերաբերող տեղեկատվության գաղտնիության ապահովում,
- ☐ սպասարկման բարձր որակ,
- ☐ միջազգային բանկային պրակտիկայում ընդունված և հաճախորդի անհատական պահանջները բավարարող անհատականացված, այսպես կոչված “tailor made” ծառայությունների մատուցում,
- ☐ հաճախորդի միջոցների կառավարման այնպիսի մոտեցում, որը թույլ է տալիս ներդրումային ուղղությունների բազմազանացման միջոցով նվազեցնել ռիսկերը և, միաժամանակ, ապահովել հնարավորինս բարձր եկամտաբերություն:

Ելնելով իր բիզնես-փիլիսոփայությունից, հաճախորդների սպասարկման քաղաքականությունից և «Ճանաչիր հաճախորդիդ սկզբունքից՝ Բանկը չի իրականացնում մանրածախ բանկային ծառայություններ մատուցող բանկերին բնորոշ հաճախորդների լայն զանգվածների սպասարկում, ինչպես նաև չի մատուցում ծառայություններ Բանկում հաշիվ չունեցող և Բանկի հաճախորդ չհանդիսացող անձանց: Բանկը ձգտում է հարաբերություններ հաստատել հետևյալ չափանիշներին համապատասխանող հաճախորդների և գործընկերների հետ.

- ☐ կորպորատիվ հաճախորդներ, որոնք ունեն կայուն գործող խոշոր և միջին ծավալի բիզնես,
- ☐ բանկ և ոչ բանկ ֆինանսական միջնորդ-կազմակերպություններ,
- ☐ ունենոր անհատներ, որոնք ունեն իրենց ունեցվածքն արդյունավետ կառավարելու խնդիր, այլընտրանքային ակտիվներում ներդրումներ իրականացնելու ցանկություն:

Բանկի յուրաքանչյուր աշխատակից հասկանում և ընդունում է Բանկի առաքելությունը և հաճախորդների ու գործընկերների հետ հարաբերություններում պարտավորվում է պահպանել Բանկի կորպորատիվ վարքագծի կանոններով սահմանված հետևյալ դրույթները.

- ☐ Բանկի աշխատակիցը գործադրում է իր բոլոր ջանքերը հաճախորդի և գործընկերոջ համար հնարավոր ռիսկերի նվազեցման ուղղությամբ:
- ☐ Բանկի աշխատակիցն ուշադիր ուսումնասիրում է արված առաջարկությունները և ժամանակին արձագանքում է Բանկին հասցեագրված դիտողություններին:
- ☐ Բանկի աշխատակիցը չի տարածում հաճախորդների և գործընկերների, նրանց գործարքների, հաշիվների և ներդրումների մասին տեղեկությունները, ինչպես նաև այլ տվյալներ, եթե մնան տեղեկատվության տրամադրումը նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:
- ☐ Բանկի աշխատակիցն իրավասու չէ կատարել հետազոտություններ և հաճախորդին կամ գործընկերոջը Բանկի անունից եզրակացություն տրամադրել, եթե դա կապված չէ իր ծառայողական պարտականությունների կատարման հետ:

Քանի որ Բանկը չի իրականացնում մասսայական սպասարկում, նրա մարկետինգային քաղաքականությունն ուղղված չէ լայնածավալ գովազդային արշավների և միջոցառումների իրականացմանը, այլ ենթադրում է նպատակային խմբերի հետ արդյունավետ և անհատական մոտեցմամբ աշխատանքների իրականացում՝ կիրառելով այսպես կոչված Direct marketing-ի ժամանակակից և առաջադեմ տեխնոլոգիաները: Ի լրումն դրա Բանկն ակտիվ է ֆինանսական միջնորդների հետ իրականացվող միջոցառումներում, մասնակցում է բոլոր հիմնական քննարկումներին, կոնֆերանսներին և սեմինարներին:

2006թ.-ին Բանկում հիմնադրվել է Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման հանձնաժողով, որի գլխավոր խնդիրներից է Բանկի հետ հաճախորդների հարաբերությունները էլ ավելի արդյունավետ, փոխշահավետ և կանխատեսելի դարձնելը՝ շարունակաբար բարելավելով սպասարկման որակը: Բանկի կողմից ընդունված արժեքներն իրենց արտացոլումն են գտնում պրակտիկ գործունեության մեջ և ապահովում զգալի արդյունք հաճախորդների համար:

ԿՈՆՖԻԴԵՆՇԻԱԼՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով ՂՆ օրենսդրությամբ և հավասարիմ մնալով փրայվիթ բենքինգի սկզբունքներին՝ մենք ղահողանում ենք մեր հաճախորդների վերաբերյալ յեղեկասվության անձեռնմխելիությունը





ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ-ն իր գործունեության հենց սկզբից կարևորել է տեխնիկական համապատասխան հազեցվածության և տեղեկատվական ապահովման հարցերը և շարունակաբար աշխատանքներ է տարել՝ միանալով ներքին ու միջազգային վճարային և տեղեկատվական համակարգերին (BankMail, CBANet, SWIFT, Bloomberg, Reuters): Ներկայումս Բանկը շարունակում է վերոնշյալ ֆինանսական տեղեկատվական համակարգերը տրամադրող ընկերությունների հետ համագործակցությունը՝ իր զարգացմանն ուղղված հետագա քայլերին համահունչ:

2006թ.-ին Բանկում տեղադրվել և գործարկվել են մի շարք տեղեկատվական համակարգեր, որոնք ապահովում են ինչպես նոր վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը, այնպես էլ երաշխավորում են Բանկի բոլոր համակարգերի աշխատանքի անընդհատությունը և անվտանգությունը: Ստեղծվել են տեղեկատվության պահուստավորման համակարգեր, որոնք թույլ են տալիս, անհրաժեշտության դեպքում, ամբողջությամբ վերականգնել պահանջվող տեղեկատվությունը և վերահսկելի դարձնել պահուստավորման գործընթացը: Բանկը միջազգային տեղեկատվական համակարգերի (Bloomberg, Reuters WealthManager) հետ անխափան աշխատանքի համար ապահովել է ինտերնետի հոսքը երկու անկախ ինտերնետ մատակարարների կապուլիներով: Նշված տեղեկատվական համակարգերից ստացված տեղեկատվությունն օպերատիվ կերպով արտացոլվում է Բանկի կայքի «Միջազգային ֆինանսական շուկաներ մասում:

Քայլեր են ձեռնարկվել օնլայն բանկային ծառայությունների մատուցման բարելավման ուղղությամբ, ինչը Բանկի հաճախորդներին թույլ է տալիս ցանկացած վայրից և օրվա ցանկացած պահին տեղեկատվություն ստանալ հաշվի մնացորդի, կատարված գործառնությունների վերաբերյալ, իրականացնել փոխանցումներ և փոխարկումներ: Նախկինում գործող «Բանկ-հաճախորդ համակարգի բարելավված տարբերակի հիման վրա ստեղծվել է «Փրայվիթ Լինք» (PrivateLink) առցանց ինտերնետ բանկային ծառայությունների մատուցման ծրագրային փաթեթը:

Գրանցվել և գործարկվել է Բանկի վեբ կայքի միջազգային հասցեն՝ www.armswissbank.com: Վեբ կայքի տեղեկատվության արագ և ժամանակին քարմնացումն ապահովելու նպատակով ներդրվել է կայքի պարբերական բնույթ կրող տեղեկատվության էջերի տեղադրման և քարմնացման համակարգ, որն օգտագործվում է Բանկի համապատասխան ստորաբաժանումների կողմից կառավարման «երկու անձի սկզբունքի համաձայն և վերահսկվում է Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի կողմից:


Վերը թվարկված միջոցառումները հանդիսանում են հերթական քայլեր՝ ուղղված բանկի Տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքի համապատասխանեցմանը "COBIT" միջազգային ստանդարտներին, որոնք նպաստում են Տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքի ռիսկերի և ներդրումների հավասարակշռմանը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի աշխատակիցները բազմիցս մասնակցել են վերապատրաստման դասընթացների, ինչպես նաև Բանկի աշխատակիցների համար պարբերաբար անցկացրել են սեմինարներ՝ նպաստելով Բանկի ողջ անձնակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների գիտելիքների աճին և ապահովելով տեղեկատվական ռեսուրսների անվտանգ և արդյունավետ շահագործումը:

ՇԻՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Մենք հոգում ենք մեր համրավի մասին, այդ իսկ դասնառով
բարձր ենք զնահասում վստահությունը և գործնական էթիկան





ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ


2006թ.-ին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ-ի ֆինանսական ցուցանիշները կարելի է բնութագրել որպես կայուն աճող: Այդ մասին են վկայում Բանկի ֆինանսական արդյունքները:

2006թ.-ին Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 3058 մլն ՀՀ դրամ: Հարկ է նշել, որ 2007թ.-ին Բանկը պլանավորում է ավելացնել իր կանոնադրական կապիտալը ևս 1 մլրդ ՀՀ դրամով, ինչն էլ ավելի կբարձրացնի Բանկի հուսալիությունը և ֆինանսական հնարավորությունները:


2006թ.-ին, նախորդ տարվա համեմատ, Բանկի ընդհանուր ակտիվներն աճել են 61%-ով կամ 3.6 մլրդ ՀՀ դրամով՝ կազմելով 9.4 մլրդ ՀՀ դրամ: Ակտիվների աճը հիմնականում պայմանավորված է պետական պարտատոմսերում ներդրումների 2.3 մլրդ ՀՀ դրամ աճով, որոնք, արդյունքում, կազմել են մոտ 5 մլրդ ՀՀ դրամ: Տարվա ընթացքում տեղի է ունեցել ակտիվների կառուցվածքի փոփոխություն: Այսպես, պետական պարտատոմսերում ներդրումների տեսակարար կշիռն աճել է 7%-ով, իսկ վարկերի տեսակարար կշիռը՝ նվազել 14%-ով: Ֆիզիկական անձանց տրված վարկերը 2005թ.-ի համեմատ աճել են 9.8%-ով, իսկ իրավաբանական անձանց տրված վարկերը՝ 9.3%-ով՝ համապատասխանաբար կազմելով 467.5 մլն և 2.11 մլրդ ՀՀ դրամ:

Հաշվետու տարում Բանկի ընդհանուր պարտավորությունների ծավալը գերազանցել է նախորդ ժամանակահատվածի ցուցանիշն ավելի քան 2 անգամ կամ 3.5 մլրդ դրամով և կազմել 6.4 մլրդ դրամ, ընդ որում՝ ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցներն աճել են 57%-ով, իսկ իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները՝ ավելի քան 3 անգամ:

Ակտիվների կառուցվածքի դինամիկա



Պարտավորությունների կառուցվածքի դինամիկա




Քանի որ 2005թ.-ը Բանկի համար կայացման տարի էր, և հիմնական նպատակը համապատասխան ենթակառուցվածքների ձևավորումն էր, այլ ոչ թե լայնածավալ գործունեության իրականացումը և առավելագույն շահույթի ապահովումը, հետևաբար, 2005թ.-ին Բանկն աշխատել է վնասով, որի մեծությունը կազմել է 11 մլն ՀՀ դրամ: 2006թ.-ի ընթացքում Բանկն արդեն իսկ սկսել է գործել շահույթով՝ ապահովելով 66.7 մլն ՀՀ դրամ շահույթ: Արդյունքում, 2006թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կուտակված շահույթը, հաշվեգրված շահութահարկը հանելուց հետո, կազմել է 45.2 մլն ՀՀ դրամ:

Շահույթի աճը հիմնականում պայմանավորված է տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների աճով՝ համապատասխանաբար 367.1 և 42.0 մլն ՀՀ դրամով: Տոկոսային եկամուտներում մեծ տեսակարար կշիռ են կազմել վարկային ներդրումներից և պետական արժեթղթերից ստացված տոկոսային եկամուտները, որոնք նախորդ տարվա համեմատությամբ աճել են համապատասխանաբար 226 և 109 մլն ՀՀ դրամով և ապահովել են ստացված տոկոսային եկամուտների 91.3%-ը:

Ներգրավված միջոցների աճով պայմանավորված՝ զգալի աճել են տոկոսային ծախսերը՝ 189.6 մլն դրամով: Ոչ տոկոսային ծախսերի 44%-ով աճը հիմնականում պայմանավորված է եղել նոր աշխատատեղերի բացման հետևանքով վճարված աշխատավարձերի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների աճով, ինչպես նաև հիմնական միջոցների և Բանկի գործունեության համար անհրաժեշտ սարքավորումների գնման և համակարգերի վերազինման ամորտիզացիոն ծախսերով, որոնց ընդհանուր տեսակարար կշիռը ոչ տոկոսային ծախսերում կազմել է 63%:

Եկամուտներ ու ծախսեր 2005-2006թթ.



Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ-ի բաժնետերերին

Մենք իրականացրել ենք «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվությունը

Տնօրինությունը պատասխանատու է սույն հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտների համաձայն պատրաստման և արժանահավատ ներկայացման համար: Այդ պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքում առաջացած էական խեղաթյուրումներ չպարունակող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և իրական ներկայացման նկատմամբ ներքին վերահսկողության մշակումը, կիրառումը և պահպանումը, պատշաճ հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն իրականացված աուդիտի հիման վրա սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն արտահայտելն է: Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների համաձայն: Այս ստանդարտները պահանջում են, որպեսզի մենք պահպանենք էթիկական պահանջները, ու աուդիտը պլանավորենք իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռքբերմանն ուղղված ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողությունների վրա, ներառյալ՝ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորը հաշվի է առնում Բանկի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և արժանահավատ ներկայացման ապահովմանն ուղղված ներքին վերահսկողությունը, ինչը թույլ է տալիս մշակել տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, սակայն ոչ Բանկի ներքին վերահսկողության արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության և տնօրինության կատարած հաշվապահական գնահատականների հիմնավորվածության, ինչպես նաև, ընդհանուր առմամբ, ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռքբերված աուդիտորական ապացույցները պատշաճ և բավարար հիմք են հանդիսանում մեր աուդիտորական եզրակացության համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշգրիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտների:

Երևան, 13-ը մարտի, 2007թ.

Grant Thornton Amyot



Վաղարշ Վաղարշյան փող. 8/1
Երևան 375012, ՀՀ
Հեռ. (374 10) 260 964 / 276 544
Ֆաքս. (374 10) 260 976
Էլ-փոստ: gta@gta.am
URL: www.gta.am

Պետական գրանցման վկայական թիվ 01Ա035877

Աուդիտորական գործունեության լիցենզիա ԱՅ # 011 տրված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից

ARM SWISS BANK
Private & Investment Banking

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

	Ծանոթ.	2006 ղեկ.31-ին ավարտված տարվա համար (ստուգված)	2005 ղեկ.31-ին ավարտված տարվա համար (ստուգված)
Հազար ՀՀ դրամ			
Տոկոսային եկամուտներ	6	625,864	258,802
Տոկոսային ծախսեր	6	(234,285)	(44,686)
Չուտ տոկոսային եկամուտներ		391,579	214,116
Տոկոսաբեր ակտիվների արժեզրկում	11	(56,203)	(25,838)
Չուտ տոկոսային եկամուտներ տոկոսաբեր ակտիվների արժեզրկումից հետո		335,376	188,278
Առևտրային ներդրումներից գուտ վնաս	7	(4,958)	-
Արտարժույթային գործարքներից գուտ եկամուտ		20,209	4,897
Արտարժույթի փոխարկումից գուտ եկամուտ/(վնաս)		5,344	(6,496)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	8	14,007	2,141
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	8	(6,217)	(4,396)
Վաճառքի համար մատչելի ներդրումներից գուտ շահույթ		17,157	7,476
Եկամուտ շահաբաժիններից		59	-
Այլ եկամուտներ	9	102	71
Այլ ակտիվների (արժեզրկում)/արժեզրկման հակադարձում	11	86	(86)
Այլ ծախսեր	10	(296,929)	(206,253)
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ		84,236	(14,368)
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	12	(17,512)	3,329
Տարվա շահույթ/(վնաս)		66,724	(11,039)

31-ից 56 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հաշվապահական հաշվեկշիռ

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2006 թվ. 31-ի դրությամբ (ստուգված)	2005 թվ. 31-ի դրությամբ (ստուգված)
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	13	684,244	330,100
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	1,063,395	403,078
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	15	2,572,866	2,351,717
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	16	1,691,984	2,404,198
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	16	18,374	-
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր		3,288,538	255,060
Հիմնական միջոցներ	17	63,783	47,101
Ոչ նյութական ակտիվներ	18	25,432	27,436
Հետաձգված հարկային ակտիվ	12	-	3,227
Այլ ակտիվներ	19	9,182	10,175
Ընդամենը՝ ակտիվներ		9,417,798	5,832,092
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	20	4,142,293	1,932,376
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	21	1,604,721	911,911
Առևտրային պարտավորություններ	22	590,054	-
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		10,853	-
Հետաձգված հարկային պարտավորություն	12	1,407	-
Այլ պարտավորություններ և պահուստներ	23	10,366	8,914
Ընդամենը՝ պարտավորություններ		6,359,694	2,853,201
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	24	3,000,000	3,000,000
Այլ պահուստներ		12,898	409
Չբաշխված շահույթ/(կուտակված վնաս)		45,206	(21,518)
Ընդամենը՝ սեփական կապիտալ		3,058,104	2,978,891
Ընդամենը՝ սեփական կապիտալ և պարտավորություններ		9,417,798	5,832,092

28

Ֆինանսական հաշվեկշիռները, ներկայացված 26-ից 56 էջերում, հաստատվել են Բանկի ղեկավարության կողմից 2007թ. մարտի 13-ին և ստորագրվել են Բանկի գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից:

31-ից 56 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվեկշիռների բաղկացուցիչ մասը:

Գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Գ. ՄԱՉԱՆՅԱՆ

Գ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

	Բաժնետիրական կապիտալ	Վաճառքի համար մատչելի ներդրումների զծով վերագրա հատման պահուստ	Կուտակված շահույթ/ (վնաս)	Ընդամենը
Հազար ՀՀ դրամ				
Հաշվեկշիռը 01.01.2005թ. դրությամբ (ստուգված)	120,000	-	(10,479)	109,521
Բաժնետիրական կապիտալի ավելացում	2,880,000	-	-	2,880,000
Տարվա շահույթ	-	-	(11,039)	(11,039)
Իրական արժեքի փոփոխությունից զուտ օգուտ	-	511	-	511
Հետաձգված հարկի ազդեցությունը	-	(102)	-	(102)
Հաշվեկշիռը 31.12.05թ. դրությամբ (ստուգված)	3,000,000	409	(21,518)	2,978,891
Տարվա շահույթ	-	-	66,724	66,724
Իրական արժեքի փոփոխությունից զուտ օգուտ	-	45,702	-	45,702
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ օգուտ	-	(30,091)	-	(30,091)
Հետաձգված հարկի ազդեցությունը	-	(3,122)	-	(3,122)
Հաշվեկշիռը 31.12.06թ. դրությամբ (ստուգված)	3,000,000	12,898	45,206	3,058,104

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

	31.12.06թ-ին ավարտված տարվա համար (ստուգված)	31.12.05թ-ին ավարտված տարվա համար (ստուգված)
Հազար ՀՀ դրամ		
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Ստացված տոկոսներ	602,211	229,406
Վճարված տոկոսներ	(224,627)	(32,670)
Ստացված կոմիսիոն վճարներ	14,007	2,141
Վճարված կոմիսիոն գումարներ	(6,217)	(4,396)
Առևտրային արժեթղթերից վնաս	(4,958)	-
Արտարժույթային գործառնություններից իրացված շահույթ	20,209	4,897
Նախկինում դուրսգրված վարկերի վերադարձ	17,259	71
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(160,159)	(100,861)
Վճարված այլ գործառնական ծախսեր	(116,020)	(82,068)
Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	141,705	16,520
<i>(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում</i>		
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	(2,285,917)	(2,631,402)
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(553,122)	(315,445)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(278,406)	(2,359,208)
Այլ ակտիվներ	485	(2,926)
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(305,631)	814,881
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	782,411	911,787
Այլ պարտավորություններ	1,024	-
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	(2,497,451)	(3,565,793)
Վճարված շահութահարկ	(3,976)	(1,171)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(2,501,427)	(3,566,964)
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի առք	(18,355)	-
Ստացված շահաբաժիններ	59	-
Հիմնական միջոցների առք	(33,938)	(17,294)
Հիմնական միջոցների վաճառք	23	-
Ոչ նյութական ակտիվների առք	(1,681)	(28,575)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(53,892)	(45,869)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	-	2,880,000
Ֆինանս. կազմակերպ. վարկերի ստացում/(մարում)	3,006,343	1,109,381
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	3,006,343	3,989,381
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	5,344	(6,496)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	456,368	370,052
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	419,662	49,610
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (ծանոթ. 13)	876,030	419,662

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնվել է 2004 թվականին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 07-ը հոկտեմբերի 2004 թվականին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N84 արտոնագրային համարով:

Բանկի հիմնական գործունեությունը կորպորատիվ, ներդրումային և փրայվիթ բանկային գործունեությանը բնորոշ ծառայությունների մատուցումն է՝ ֆինանսական գործիքներում ներդրումներ, ֆիզիկական և իրավաբանական անձանցից ավանդների ներգրավում, ֆինանսավորման (վարկավորում, ֆակտորինգ) և բանկային այլ ծառայությունների մատուցում:

Բանկի գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Խանջյան 13/2:

2. Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայրը և համապատասխան ենթակառուցվածքները, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Հետևաբար, Հայաստանում ծավալված գործունեությունը կապված է որոշակի ռիսկերի հետ, որոնք բնորոշ են զարգացած երկրների շուկաներին:

Նման ռիսկերը և դրանցից բխող հետևանքները կարող են ազդեցություն թողնել Բանկի հետագա գործունեության վրա: Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում ճշգրտումներ, որոնք կարող են առաջանալ նշված անորոշությունների՝ հետագայում որոշակի դառնալու արդյունքում: Նման ճշգրտումները, եթե այդպիսիք կլինեն, կարտացոլվեն Բանկի ֆինանսական հաշվետվություններում այն ժամանակաշրջանում, երբ այդ ճշգրտումներն ի հայտ կգան, և դրանք հնարավոր կլինի գնահատել:

Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում: Գնանշումները փոքր իրացվելի շուկաներում կարող են չհամընկնել ֆինանսական գործիքների իրական արժեքներին, ինչը հնարավոր կլինի ակտիվ շուկայի դեպքում, միմյանց հետ գործարքների պատրաստ մեծ թվով վաճառողների և գնորդների պայմաններում:

3. Հաշվետվությունների պատրաստման հիմքերը

3.1. Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտների (ՖՀՆՄՍ) և Մեկնաբանությունների, որոնք հաստատվել են համապատասխանաբար Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) և Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի (ՖՀՄՄԿ) կողմից:

3.2. Զափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով:

3.3. Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթը այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՆՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4. Վերադասակարգում

Անհրաժեշտության դեպքում համադրելի թվերը ճշգրտվել են՝ ընթացիկ տարվա հետ համադրելիության ապահովման նպատակով:

3.5. Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Հետևյալ նոր ստանդարտները, ստանդարտների փոփոխությունները կամ մեկնաբանությունները, որոնք կիրառելի են Բանկի գործառնությունների նկատմամբ, պարտադիր ուժ ունեն 2006թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող ֆինանսական տարվա համար:

☐ ՀՀՄՍ 39 Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և չափում փոփոխություն Ֆինանսական երաշխիքների պայմանագրեր, գործում է 2006թ. հունվարի 1-ին կամ ավելի ուշ սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

☐ ՀՀՄՍ 39 Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և չափում փոփոխություն Իրական արժեքի տարբերակ, գործում է 2006թ. հունվարի 1-ին կամ ավելի ուշ սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

☐ Նշված փոփոխությունների ազդեցությունը Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա էական չէ: Բանկի համար կիրառելի հետևյալ նոր ստանդարտները, ստանդարտների փոփոխությունները և մեկնաբանություններն արդեն հրապարակվել են, սակայն չեն գործում 2006թ.-ի համար և կիրառման մեջ չեն դրվել նախատեսված ժամկետից առաջ:

☐ ՖՀՆՄՍ 7 Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ, գործում է 2007թ. հունվարի 1-ին կամ ավելի ուշ սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

☐ Փոփոխություն ՀՀՄՍ 1-ում. Փոփոխություններ կապիտալի վերաբերյալ բացահայտումներում, գործում է 2007թ. հունվարի 1-ին կամ ավելի ուշ սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

3.6. Մեփական կապիտալի և տարվա շահույթի համադրումը ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների և ՖՀՆՄՍ-ի միջև

Մեփական կապիտալի, տարվա շահույթի համադրումը ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների և ՖՀՆՄՍ-ի միջև ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2006		2005	
	Կապիտալ	Տարվա շահույթ	Կապիտալ	Տարվա վնաս
ՀՀ հաշվապահ. հաշվառման ստանդարտներ	3,055,369	64,571	2,978,309	(11,621)
Սկզբնական մնացորդի ճշտում	-	(582)	-	-
Արժեզրկման հակադարձում հետհաշվեկշռային հոդվածների գծով	954	954	727	727
Արժեզրկման հակադարձում ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով	2,082	2,082	-	-
Արժեզրկման հակադարձում այլ ակտիվների գծով	201	201	-	-
Հետաձգված հարկ	(502)	(502)	(145)	(145)
ՖՀՆՄՍ	3,058,104	66,724	2,978,891	(11,039)

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1. Եկամուտների և ծախսերի ճանաչում

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային եկամուտները ներառում են նաև տոկոսային եկամուտներ ներդրումային արժեթղթերից: Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով, ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարչական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան: Ակտիվների կառավարման գծով վճարները ճանաչվում են ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում: Նույն սկզբունքն է կիրառվում կարողությունների կառավարման, ֆինանսական պլանավորման և ակտիվների պահպանման ծառայությունների դեպքում, որոնք ենթադրում են ծառայությունների մատուցման երկար ժամկետ: Երբ վարկերը և այլ փոխատվությունները դառնում են կասկածելի և վերաճնակերպվում են իրենց փոխհատուցվող գումարների չափով, տոկոսային եկամուտը շարունակվում է ճանաչվել այն արդյունավետ տոկոսադրույքով, ինչով զեղչվել են ապագա դրամական հոսքերը վարկի փոխհատուցվող գումարը ստանալու նպատակով:



4.2. Արտարժույթի փոխարկում

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամական ակտիվների ու պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Արտարժույթի փոխարկումից զուտ եկամուտ հոդվածում»:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի դրոշման օրվա փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, որոնց գծով շահույթը և վնասը ճանաչվել է ուղղակիորեն սեփական կապիտալում, նույնպես ուղղակիորեն ճանաչվում են սեփական կապիտալում որպես փոխարժեքային բաղադրիչ:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Արտարժութային գործարքներից զուտ եկամուտ հոդվածում»:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31 դեկտեմբեր 2006	31 դեկտեմբեր 2005
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	363.5	450.19
ՀՀ դրամ/1 եվրո	478.73	532.35

4.3. Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գույվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում, և ինչն առաջացման պահին չի ազդում ո՛չ հաշվապահական, և ո՛չ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույթով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր, ասոցիացված կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք մոտ ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ ծախսերում» :

4.4. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից և այլ բանկերում հաշիվներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակամիջոցում և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.5 Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամանակաշրջանների համար բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.6 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Բանկը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, ֆորվարդներ, սվոպեր, օպցիոններ և այլ ածանցյալ գործիքներ: Բոլոր ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող և դրանց հաշվառումը իրականացվում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք վերաչափվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումների կամ այնպիսի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գներն ու այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն: Նշված գործառնություններից արդյունքները հաշվառվում են որպես առևտրային նպատակներով պահվող ակտիվներից կամ արտարժույթային գործառնություններից շահույթ կամ վնաս՝ կախված ածանցյալ գործիքների բնույթից:

Այլ ֆինանսական գործիքների բաղադրիչ հանդիսացող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ, եթե դրանց գծով ռիսկերը և առանձնահատկությունները խիստ կապված չեն հիմնական պայմանագրի ռիսկերի և առանձնահատկությունների հետ, և հիմնական պայմանագիրը չի հաշվառվում իրական արժեքով՝ ճշգրտվող ֆինանսական արդյունքներով: Ներառված ածանցյալ գործիքը հանդիսանում է բարդ ֆինանսական գործիքի բաղադրիչ, որը ներառում է ինչպես հիմնական բաղադրիչը, այնպես էլ ածանցյալ բաղադրիչը, ինչի արդյունքում հիմնական գործիքի և ինքնուրույն ածանցյալ գործիքի որոշ դրամական հոսքեր փոփոխվում են նույն ձևով:

4.7 Ֆինանսական գործիքներ

Բանկը ֆինանսական ակտիվներն ու պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կողմ առք ու վաճառքի դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաքով: Սովորական ձեռքբերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռքբերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառված նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Բանկի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, վարկեր և դեբիտորական պարտքեր, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Բանկի ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության և հնարավորության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Այս կատեգորիայում հաշվառվում են առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս կատեգորիայում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այնպես է որոշվում ղեկավարության կողմից նշված ակտիվի ձեռքբերման պահին:

Ածանցյալ գործիքները նույնպես դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող, բացի այն դեպքերից, երբ դրանք օգտագործվում են հեջավորման նպատակով: Առևտրային նպատակներով պահվող ակտիվներից շահույթը և վնասը արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Մինչև մարման ժամկետը պահվող արժեքներ

Ֆիքսված մարման ժամկետով արժեքները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, երբ Բանկը հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը: Եթե Բանկի կողմից իրականացվում է մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների էական գումարի վաճառք, ապա ամբողջ դասը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած դրանց գծով արժեզրկումից պահուստները:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապահին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից: Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

Վաճառքի համար մատչելի ներդրումներ

Վաճառքի համար մատչելի ներդրումները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Բանկը մտադիր է պահել անորոշ ժամկետով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած շահույթն ու վնասը վերագրվում է սեփական կապիտալին մինչև ֆինանսական ակտիվի օտարումը կամ արժեզրկումը, որի դեպքում կապիտալում ճանաչված շահույթը կամ վնասը վերաձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ամեն դեպքում, տոկոսները հաշվարկվում են արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժինները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ Բանկն իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժինները:

Ակտիվ ֆինանսական շուկաներում շրջանառվող ֆինանսական ակտիվի իրական արժեքը՝ հաշվետու ամսաթվին բորսայի փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գինն է: Եթե գնանշված շուկայական գինն առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը որոշվում է գնային մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով: Հակառակ դեպքում, ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած արժեզրկումից պահուստների գումարները:

4.8. Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով Բանկն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, արժեզրկումից ծախսն արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ապահովված ֆինանսական ակտիվների դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքը ներառում է գրավների իրացումից փոխհատուցվող գումարները՝ հանած գրավի ձեռքբերման և իրացման ծախսերը, անկախ նրանից, թե գրավը կփոխանցվի Բանկին, թե՛ ոչ:

Բանկը, անհատական զնահատմամբ, սկզբից զնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են, և հետո անհատական կամ խմբային զնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական զնահատման արդյունքում՝ արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են վարկային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային զնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական զնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում: Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկումից պահուստի գումարը նվազի, և նվազումը կարելի է օբյեկտիվորեն վերագրել այն իրադարձությանը, որը տեղի է ունեցել արժեզրկման ճանաչումից հետո, արժեզրկումից կորուստը հակադարձվում է և արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Կորուստի հակադարձումն իրականացվում է այն չափով, որ ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը հակադարձման ամսաթվով չգերազանցի ակտիվի ամորտիզացվող արժեքը:

Երբ վարկի գումարը դառնում է անհավաքագրելի, այն դուրս է գրվում համապատասխան պահուստի հաշվին: Դուրսգրումն իրականացվում է համապատասխան գործընթացներից և կորուստների մեծությունը որոշելուց հետո: Նախկինում դուրսգրված գումարների հակադարձումն արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ նվազեցնելով արժեզրկումից կորուստների հաշիվները:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Երբ վաճառքի համար մատչելի ակտիվն արժեզրկվում է, ապա նրա արժեքի (նվազեցված մարումների և ամորտիզացիայի գումարներով) և ընթացիկ իրական արժեքի տարբերությունը, բացառությամբ նախկինում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված արժեզրկումից գումարների, կապիտալից վերաձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձումը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի ճանաչվում: Վաճառքի համար մատչելի պարտքային գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձումը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե ակտիվի իրական արժեքի բարձրացումն օբյեկտիվորեն կարելի է համարել հետագա իրադարձությունների արդյունք, որոնք կատարվել են կորուստը ֆինանսական արդյունքներով ճանաչելուց հետո:

4.9. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- ☐ վերանում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,
- ☐ Բանկը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն, և
- ☐ Բանկը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:
- ☐ եթե Բանկը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը հաշվառվում է Բանկի շարունակվող մասնակցության համապատասխան ֆինանսական ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, ապա այդպիսի մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ ակտիվի հաշվեկշռային արժեք կամ Բանկի կողմից փոխհատուցվելիք առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի դուրսգրված վաճառքի և/կամ զննան օպցիոնի ձև (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Բանկը կարող է հետ գնել փոխանցվող ակտիվը, բացառությամբ իրական արժեքով զնահատված դուրսգրված վաճառքի օպցիոնի (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցվող ակտիվի իրական արժեքը կամ օպցիոնի կատարման գինը:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.10. Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրեր

Հետզման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործառնություններ: Հետզման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետզման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով արժեթղթերի գնումը («հակադարձ ռեպո») հաշվառվում է «Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ «Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ հաշիվներում:

Արժեթղթերի առքից և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որը հաշվեգրվում է հետզման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ձեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին: Այս դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով՝ որպես առևտրային նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Առևտրային արժեթղթերից գուտ շահույթ/վնաս հոդվածում:

4.11. Վարձակալություն

Գործառնական վարձակալություն - Բանկը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

4.12. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքն ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Համակարգիչներ և կապի միջոցներ	4	25
Տրանսպորտային միջոցներ	5	20
Գույք և գրասենյակային միջոցներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	3-5	33.33-20

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումներն ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի կազմակերպություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից գուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

4.13. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն:

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշված օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են օգտակար ծառայության՝ 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն յուրաքանչյուր տարի գնահատվում են արժեզրկման առումով՝ անհատապես կամ առանձին դրամաստեղծ միավորի համար: Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները յուրաքանչյուր տարի հսկվում են հիմնավորելու համար նրանց հաշվառման շարունակականությունը նշված դասում:

4.14. Ներգրավված միջոցներ

Ներգրավված միջոցները, որոնք ներառում են Կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.15. Հատկացումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամին

Բանկում, աշխատակիցների աշխատավարձի հիման վրա հաշվարկված որոշակի տոկոսը Հայաստանի Հանրապետության Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին փոխանցելուց բացի, այլ հատուկ կենսաթոշակային հիմնադրամ չի ձևավորվում: Նշված հիմնադրամին հատկացումների հետ կապված ծախսերն արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերվում են:

4.16. Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, այլ բացահայտվում են ծանոթագրություններում, բացի այն դեպքերից, երբ դրանց մարման նպատակով տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հնարավորությունը շատ փոքր է: Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, այլ բացահայտվում են, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը հավանական է դառնում:

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Իր գործունեության ընթացքում Բանկը կրում է վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ, որոնք վերաբերում են վարկային գծերի չօգտագործված մասին, ակրեդիտիվներին, երաշխիքներին: Վարկային ռիսկ պարունակող պարտավորությունների նկատմամբ ստեղծվում են հատուկ պահուստներ, երբ կորուստներն ավելի հավանական են դառնում, քան ոչ:

4.17. Բաժնետիրական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերից, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Գնված սեփական բաժնետոմսեր

Երբ Բանկը կամ նրա դուստր կազմակերպությունները գնում են Բանկի բաժնետոմսերը, սեփական կապիտալը նվազեցվում է վճարված գումարի չափով, ներառյալ գործառնությանը բնորոշ բոլոր ծախսերը՝ նվազեցված հարկերով, մինչև գործարքի չեղյալ համարվելը կամ վերաթողարկումը: Երբ գնված բաժնետոմսերը վաճառվում են երրորդ կողմին կամ վերաթողարկվում են, ստացված գումարները ներառվում են կապիտալում: Գնված բաժնետոմսերը հաշվառվում են միջին կշռված արժեքով:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Մինչև հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը հայտարարված կամ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրատարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

4.18. Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվեկշռում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք՝ իրականացնելու հաշվանցված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն՝ իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

4.19. Հավատարմագրային գործառնություններ

Բանկն իրականացնում է հավատարմագրային գործառնություններ իր հաճախորդների համար: Բանկը նաև մատուցում է պահառուական ծառայություններ, ինչը ներառում է հաճախորդներին պատկանող արժեթղթերի դեպո հաշիվներով գործառնությունների հաշվառում: Բանկի կողմից կառավարվող ակտիվները, ինչպես նաև դրանցից ծագող պարտավորությունները չեն ներառվում Բանկի ֆինանսական հաշվետվություններում: Բանկը կրում է հավատարմագրային գործառնությունների գծով գործառնական ռիսկը, իսկ նշված գործառնությունների վարկային և շուկայական ռիսկը կրում են հաճախորդները:

Հավատարմագրային գործառնություններից ստացված վարձավճարներն արտացոլվում են կոմիսիոն և այլ տեսքով եկամուտներում:

5. Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՆՄՄ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն ղեկավարում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև.

Ներդրումային արժեթղթերի դասակարգում

Բանկի ներդրումային արժեթղթերը ներառում են ՀՀ ԿԲ, պետական և ոչ պետական պարտատոմսերը, ոչ պետական բաժնետոմսերը: Սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը դասակարգում է արժեթղթերը որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականացվում է կապիտալում:

Փոխկապակցված կողմերի հետ գործառնություններ

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ փոխկապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Վարկերի և այլ փոխառվածքային գծով արժեզրկումից պահուսպներ

Բանկը պարբերաբար գնահատում է տրամադրված վարկերը և փոխառվածքայինները արժեզրկման առումով: Բանկն օգտագործում է դատողություններ, հիմնվելով իր փորձի վրա, գնահատելու համար կորուստների մեծությունը, երբ վարկառուի մոտ ի հայտ են գալիս ֆինանսական դժվարություններ, և չկան բավարար տեղեկություններ մնանատիպ վարկառուների վերաբերյալ: Նմանապես, Բանկը գնահատում է փոփոխությունները կանխատեսվող դրամական հոսքերում՝ հիմնվելով այն տեղեկությունների վրա, որոնք բացահայտում են վարկառուների ֆինանսական դրությունը կամ տնտեսական պայմանները՝ տեղական և միջազգային, որոնք ազդեցություն ունեն նշված վարկառուների խմբի կողմից իրենց պարտավորությունների չկատարման վրա, անբարենպաստ փոփոխությունները: Ղեկավարությունը կատարում է գնահատումներ՝ հիմնվելով մնանատիպ ռիսկերով և արժեզրկման օբյեկտիվ պայմաններով ակտիվներից ունեցած արժեզրկումից կորուստների իր պատմական փորձի վրա: Հիմնվելով իր փորձի վրա՝ Բանկն օգտագործում է դատողություններ՝ ճշգրտելու համար անհրաժեշտ տեղեկությունները վարկերի և փոխառվածքայինների խմբի համար՝ ելնելով ընթացիկ պայմաններից:

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների (ծանոթ. 25):

Կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումների արժեզրկում

Բանկը համարում է կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումն արժեզրկված, երբ դրա իրական արժեքի նվազումն էական է կամ կրում է երկարատև բնույթ: Որոշելու համար, արդյոք էական կամ երկարատև է նվազումը, Բանկը կատարում է որոշակի դատողություններ: Այդ դատողությունները կատարելիս, այլ գործոնների հետ մեկտեղ, Բանկը հաշվի է առնում նաև բաժնետոմսերի գնի փոփոխականությունը: Բացի դրանից, արժեզրկումը հնարավոր է, երբ առկա են ապացույցներ, որ վատացել է այն կազմակերպության, արդյունաբերության կամ ճյուղի ֆինանսական վիճակը, որտեղ կատարվել է ներդրումը, կատարվել են փոփոխություններ տեխնոլոգիաներում և գործառնական կամ ֆինանսական դրամական հոսքերում:

6. Տոկոսային եկամուտներ և ծախսեր		
Հազար ՀՀ դրամ	2006	2005
Վարկեր և փոխառվածքային հաճախորդներին	360,659	134,874
